ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

• ք. Երևան, Փ.Բուզանդ 1/3
• г. Ереван, ул. Бузанда 1/3
• 1/3, Buzand st. Yerevan
• www. envexpertise@env.am

Հեռ..(374 011) 220-218
Тел. (374 011) 220-218
Tel. (374 011) 220-218

ՇԱՀ-26/574

«18» 11 2024 թ.

Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավար
պարոն Շանթ Առաքելյանին

Հարգելի պարոն Առաքելյան

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի՝ 2024 թ. դեկտեմբերի 4-ին՝ ժամը 12:00-ին, Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի ղեկավարի նստավայրում տեղի կունենա «Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրում նախատեսվող միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը:

Խնդրում եմ աջակցել և ապահովել ազդակիր համայնքի/բնակավայրի (Խնձորեսկ) և շահագրգիռ հանրության, համապատասխան մասնագետների մասնակցությունը հանրային լսմանը:

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում (www.env.am), ք. Երևան, Բուզանդի 1/3 հասցեում, Բաղրամյանի համայնքապետարանում կամ վերջինիս պաշտոնական կայքում, նախաձեռնողի պաշտոնական կայքում (առկայության դեպքում):

Հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունը, առկայության դեպքում՝ նաև շահագրգիռ հանրության կարծիքները, դիտողությունները և առաջարկություններն օրենսդրությամբ սահմանված կարգով՝ կտեղադրվեն լիազոր մարմնի պաշտոնական կայքում:

Տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ, Վ.Հարությունյան 011 22-02-17